*495 գ. 4 տող.*



Ց[Ի]Շ[Ա]Տ[Ա] Կ Է Ս̅Բ ՆՇԱՆՔՍ/ԷՄԻՆԻՆ ԵՒ ԻՒՐ ԿՈՂԱԿՑ/ԻՆ ՋԱՊԼՈՒԻՆ ԵՒ ԻՒՐ ԾՆ/ՈՂԱՑՆ. ԹՎ[ԻՆ] ՊՂԲ (1443):

Հրատ. Ե. Շահազիզ, 58, Ե. Մուշեղյան, 53

*496 է.*

ՑԻՇԱՏԱԿ Է Ս̅Բ ՆՇԱՆՔՍ ԱԼԵՔՍԱՆՈՍԻՆ, ԳՐԻԳՈՐԻՆ, ԽԱՉԻԿԻՆ, ԽԱՉԱՐԻՆ, ՄԱՐՏԻՐՈՍԻՆ. ԹՎ[ԻՆ] ՋԺԱ (1462):

Հրատ. Ե. Շահազիզ, 58, Ե. Մուշեղյան, 54

*497 ը*

ՑԻՇԱՏԱԿ Է Ս̅Բ ՆՇԱՆՔՍ ՏՈՎԼԱԹ Խ[Ա] Թ[ՈՒՆԻՆ] ...

Հրատ. Ե. Շահազիզ, 58, Ե. Մուշեղյան, 54

*498 թ. 4 տող.*



ԲԱՐԵԽՕՍ Է Ս̅Բ ՆՇԱՆՍ Տ̅Ր ՍԱՐԳ/ԸՍԻՆ ԿՈՂԱԳՑԻՆ ՄԱՐԻԱՄԻՆ ԵՒ Ե/ՐԻՑ ՁԱԻԱԿԱՑ ՀՈԳՈՑՆ. ԹՎ[ԻՆ] ՌՃԽԸ (1699):

Ծանոթ. *Թվականը փորագրված է վերևում:*

Հրատ. Ե. Շահազիզ, 58, Ե. Մուշեղյան, 56

## ԽՆԴՐԱԿԱՏԱՐ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ

*Կառուցված է եղել քաղաքի հարավակողմում՝ ս. Նիկողայոսի և ս. Թեոդորոսի միջև: Ըստ Հովսեփ Արղությանի «Դավթարի» հիմնադրվել է 1781 թվականին: Ճարտարապետական հորինվածքով նման է եղել Նոր Նախիջևանի մյուս եկեղեցիներին: Ունեցել է հետևյալ արձանագրությունները.*

*499. Խաչքար, ագուցված եկեղեցու ձախակողմյան պատին, վրան*

ԲԱՐԵԽՕՍ Է Ս̅Բ ՆՇԱՆՍ ՄԻՆԱՍԻՆ ՀՈԳԻՈՑՆ ԵՒ ԾՆՈՂԱՑՆ ԵՒ ԵՂԲԱՐՑՆ:

Հրատ. Ե. Շահազիզ, 58

*500. Խաչքար, ագուցված եկեղեցու մեծ խորանի աջակողմյան պատին, վրան*

ՑԻՇԱՏԱԿ Է Ս̅Բ ՆՇԱՆՍ ՊԵՏՐՈՍԻՆ ԿՈՂԱԿՑԻՆ...

Հրատ. Ե. Շահազիզ, 59

*501. Խաչքարի մարմարակերտ ընկոր, վրան*

ՑԻՇ[Ա]ՏԱԿ] Է ՔՈՒԼԱՖԻՆ ՀՕՐ ՄԷԼԻՔ ՇԱՀԻՆ ՈՐԴԻՈՑՆ ՍՏԱՓԱՆՈՍԻՆ ԵՒ...

Հրատ. Ե. Շահազիզ, 60

*502. Հյուսիսային և հարավային դռների ճակատին ամրացված մետաղյա թիթեղների վրա՝*
ԱՅՍ ԻՐԿԱԹԵԱՅ ՓԱՅՏԵԱՅ ԴՈՒՌՆ ԵԿԵՂԵՑՒՈՅ ՍԲ ԱԾ ԱԾՆԱՅ Ի ՅԻՇԱՏԱԿ ՆԱԽԻՋԵՒԱՆՑԻ ՄԿՐՏԻՉ ՏԷՐ-ԱՌԱՔԵԼԵԱՆ ԱՋԵՄԵԱՆՑ, Ի 1857 Թ.:

Հրատ. Ե. Շահազիզ, 60

## Ս. Աստվածածնի հին գերեզմանոց

*Այս գերեզմանոցում են թաղված եղել Հովհաննես Մարկոսյան Պոպովն ու Ստեփան Գևորգյան Նաթալյանը, որոնք որոշակի գումար են արամադրել Նոր Նախիջևանի աղքատների օգտին:*

*503. Հ. Մ. Պոպովի մահարձանին՝ 8 տող.*

ԿԵԱՆՔԻԴ ՕՐԵՐԸ ՉԽՆԱՅԵԼՈՎ,
ԻՆՉՔԴ, ՍՏԱՑՈՒԱԾՔԴ ԱԶԳԻԴ ՋՈՀԵԼՈՎ,
ԴՈՒ ԱՂԲԻՒՐ ԵՂԱՐ ԾԱՐԱՒԻՆԵՐՈՒՆ
ՈՒ ՊԱՏՍՊԱՐԱՆ ԿԱՐՕՏԵԱԼՆԵՐՈՒՆ:
ԱՅՈ՛, ՓԱՌԱՀԵՂ ԿԵԱՆՔՈՎ ՉԿԵՑԱՐ,
ԲԱՅՑ ՆԱԽԱՆՁԵԼԻ ՄԱՀՈՎ ՀԵՌԱՑԱՐ.
ՉԵՆ ՄՈՌԱՆԱԼ ՔԵԶ ՈՐԲՔ ՆԱԽԻՋԵՒԱՆԻ
ՔԱՆԻ ՈՐ ՔԱՂԱՔՍ ԿԱՅ ՅԱԿԱՍՏԱՆԻ:

Հրատ. Ե. Շահազիզ, 60

## Ս. ՀԱՄԲԱՐՁՈՒՄ

*Ս. Համբարձում եկեղեցին հիմնադրվել է Նոր Նախիջևանի հյուսիս-արևելյան մասում 1781 թ. մայիսի 2-ին, կառուցումն ավարտվելուց հետո օծվել է 1783 թ. օգոստոսի 27-ին: Ճարտարապետական ոճով նման է նախորդներին: Շնորհիվ Ե. Շահազիզի և Ս. Ջալալյանի մեզ են հասել հետևյալ արձանագրությունները.*

*504. Եկեղեցու բեմի ճակատին ագուցված* խաչերի վրա՝
ՊՁԸ (1439). ԿԱՆԳՆԵՑԱՒ ՍԲ ՆՇԱՆՍ ՔՍ-Ի ԲԱՐԵԽԱՒՍ Է ՄՈՒՂԱՑԻՆ, ԿԱՐԱՊԵՏԻՆ:

Հրատ. Ե. Շահազիզ, 62

*505. Ավազանի ստորև ագուցված* մարմարե սալաքարին.
ՅԻՇԱՏԱԿ Է ՍԲ ԱՒԱԶԱՆՍ ՍԲ ՀԱՄԲԱՐՁՄԱՆ ԺԱՄԻՆ ԽՈՒՊԵԱՐ ՕՂԼՈՒՆ ԲԱՐՍԵՂԻՆ ՀՕՐԸ ԳՐԻԳՈՐԻՆ ԵՒ ՄՕՐԸ՝ ՄԱՐԻԱՄԻՆ ՀՈԴՈՒՆ:
ԹՎ. 1799 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 13-ԻՆ:

Հրատ. Ե. Շահազիզ, 62

*506. Արևելյան պատի մեջ արտաքուստ ագուցված* մարմարե հուշասալին.
ՇՆՈՐՀԻՒ ԵՒ ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲ ԱՄԵՆԱԶՕՐԻՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԿԱՆԳՆԵԱԼ ԿԱՌՈՒՑԱՒ ՍԲ ՀԱՄԲԱՐՁՄԱՆ ԵԿԵՂԵՑՒՈՅՍ Ա. ԽՈՐԱՆՆ ԱՐԴԵԱՄԲՔ ԵՒ ԾԱԽԻՒՔ ՇՈՐՊԱՐՈՆԵԱՆ ՊՐ ԽԱՉԱՏՈՒՐ ՄԱՏԹԷՈՍՈՎԻՆ ՀԱՆԴԵՐՁ ԿԵՆԱԿՑԻՒ ԵՒ ԾՆՈՂԻՒՔՍ Ի ՓԱՌՍ ՄԻՈՅՆ ԱԾՈՑՆ Ի ԳՈՎԵՍՏ ԵՒ Ի ՊԱՏԻՒ ՆՈՐԻՆ: ԱՐԴ, ՈՐՔ ՀԱՆԴԻՊԻՔ ԵՒ ԸՆԹԵՌՆՈՒՔ ԶԱՅՍ ՄԱՏԵԱՆ ԵՒ ԵԹ ՅԻՇԵՑԷՔ ԵՒ ԴՈՒՔ ԼԻՋԻՔ ՅԻՇԵԱԼ ԱԾ ՈՅՆ ՅԱՏԵԱՆ ՓՐԿՉԻՆ ԱՄԵՆԱՅՆԻ. ԹՎ. 1799-ԻՆ Ի ՆՈՐ ՆԱԽԻՋԵՒԱՆ, Ի ՅԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵԱՆ ՏԵԱՌՆ ՅՈՎՍԵՓԱՅ ԱԾԱՐԵԱԼ ԵՒ ՊՍԱԿԱԶԴԵԱՑ